ՎԱՇԽԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԱՅԼԱՍԵՐՎԱԾ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ

Զեկույց-հետազոտություն

Երևան 2017

Զեկույցը պատրաստվել է «Վելես» Իրավապաշտպան հասարակական կազմակերպության կողմից «Իրավական աջակցություն կոռուպցիայի զոհերին» ծրագրի շրջանակներում՝ National Endowment for Democracy Ֆոնդի ֆինանսական աջակցությամբ:

«Վելես» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը գրանցվել է 13.02.2014թ.: Մինչ պետական գրանցումը կազմակերպության անդամները գործել են որպես նախաձեռնող խումբ: Կազմակերպությունը որպես պայքարի թիրախ է ընտրել հասարակության մեջ լայն տարածում գտած այնպիսի արատավոր երևույթները ինչպիսիք են կոռուպցիան և նրա այլանդակ դրսևորումները՝ վաշխառությունը, խարդախությունը, կոռուպցիայի միջոցով ձեռք բերված ֆինանսական միջոցների ստվերային շրջանառությունը, փողերի լվացումը և այլն:

© «Վելես» Իրավապաշտպան ՀԿ 2017

www.veles.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……...……....4

Պատմական ակնարկ…….....5

Վաշխառության անդրադարձը արվեստում.....8

Ժամանակակից համաշխարհային վաշխառուական համակարգ…….....9

Վաշխառության սոցիալ-տնտեսական հետևանքները……...11

Վաշխառությունը որպես կազմակերպված հանցագործության և

մարդու կողմից մարդու շահագործման դրսևորում……....13

Վաշխառության տարածումը Հայաստանում……...14

Վաշխառությունը որպես խարդախության միջոց……...20

Վաշխառությունը որպես կոռուպցիաի դրսևորում……..21

Վաշխառությունը որպես փողերի լվացման միջոց……..22

Վաշխառությունը որպես ստվերային բիզնեսի շարժիչ ուժ…….....22

Վաշխառությունը որպես ապօրինի ձեռնարկատիրություն…….....24

Վաշխառությունը որպես արտագաղթի շարժիչ ուժ……...26

Վաշխառությունը որպես ծանր հանցագործությունների շարժառիթ……...27

Վաշխառությանը վերաբերող ՀՀ դատաիրավական պրակտիկան……...28

Եզրակացություն …….....34

Հավելվածներ.....36

Վաշխառությունը ժամանակի լաբորատորիա է,

ուր ներկայում մարդիկ փորոյ վաճառում են իրենց ապագան

Ներածություն

Հետխորհրդային շրջանի Հայաստանում լայն տարածում գտավ վաշխառության երևույթը, որը հանդիսանում է կոռուպցիայի բախկացուցիչ մաս և դրսևորում, ավելին՝ վաշխառության միջոցով կատարվում է անօրինական ճանապարհով ձեռք բերված եկամուտների օրինականացում, որն ուղեկցվում է հասարակության խիստ բևեռացմամբ՝ մի կողմից քաղաքացիների մեծ մասի ունեզրկմամբ, իսկ մյուս կողմից քաղաքացիների մի փոքր մասի անհիմն հարստացմամբ: Վաշխառությունը որպես երևույթ անհրաժեշտ է դիտարկել համակարգային՝ իրավական, սոցիալ-տնտեսական, բարոյական դիտանկյուններից և միայն այդ դեպքում կարելի է հասկանալ վաշխառության երևույթի կործանարար էությունը հասարակության համար: Մեր զեկույցում փորձել ենք հնարավորինս բացահայտել վաշխառության էությունը և նրա դերը որպես հասարակության, ինչպես նաև տնտեսության բնականոն զարգացումը արգելակող երևույթի:

Վաշխառությունը մարդու գործունեության ամենահին տեսակներից է: Տնտեսական կանիբալիզմի այս տեսակը գոյություն է ունեցել մինչև փողի հայտնագործումը և մարդկային քաղաքակրթության զարգացման ընթացքում մշտապես կատարելագործվելով կերպարանափոխվել է, զարգացնելով տնտեսական ճնշման և իշխանության զավթման մեխանիզմները ի դեմս վաշխառության՝ որպես ֆինանսական ստրկացման գործիք:

Մարդկության պատմության մեջ , հազարամյակների ընթացքում , տարբեր պետություններում , մշտապես հանդիպում ենք հետևյալին՝ վաշխառուները կենտրոնացնում են հսկայական հարստություն հասարակության ունեզրկման հաշվին, իսկ ունեզրկված և թալանված հասարակությունը ստիպված, այլընտրանք չունենալով, ինքնակամ էկսպրոպրիացիայի միջոցով փորձում է վերադարձնել:

Պատմական ակնարկ

Վաշխառության հիմնահարցը ունի խորը պատմական անցյալ: Առաջին վաշխառուները սկսել են գործել մինչև փողի ծագումը (նրանց մասին նշել է հույն բանաստեղծ Հեսիոդոսը մ.թ. ա. VIII-VII դարերում , փաստացի Հելլադայում դրամային համակարգի ստեղծումից դեռ մոտ 200 տարի առաջ): Առաջին վարկերը տրվել են և վերադարձվել են բնամթերքով:

Վաշխառություն ասելով հասկանում ենք տոկոսով փող տրամադրելը:

Տոկոս բառը ունի հունական ծագում և այն նշանակում է հավելավճար, ավելացում: Վարկային տոկոս հասկացությունը առաջացել է Հին Բաբելոնում:

Բաբելոնում վաշխառությունը որպես երևույթ վկայակոչված է մ.թ.ա.երրորդ հազարամյակի երկրորդ կեսին:

Տոկոս հասկացության հետևանքները դժվար թե ամբողջությամբ ընկալվել էին Բաբելոնում, սակայն այդ «հիվանդությունը» զարգացում է ապրել և այսօր 21-րդ դարում, ձեռք է բերել աղետային մասշտաբներ, որը հաճախ այլ կերպ անվանվում է համաշխարային տնտեսական ճգնաժամ:

Վաշխառության ծանր սոցիալ – տնտեսական հետևանքների պատճառով տոկոս հասկացությունը արգելված է եղել բոլոր կրոններով: Ավելին՝ անելով պատմական էկսկուրս, տեսնում ենք, որ վաշխառության ***՞՞ վիրուսը՞՞*** եղել է մարդկության զարգացման մշտական ուղեկիցը: Հասարակության նման հիվանդության և դրա ծանր հետևանքների, ինչպես նաև բարոյահոգեբանական ***՞՞հիգիենայի՞՞*** կարևորության մասին նշել են այնպիսի հին փիլիսոփաներ, ինչպիսիք են օրինակ՝ Արիստոտելը:Նա իր աշխատություններում հայտնել է մտահոգություն, որ վաշխառուները կարող են սեղմել հասարակության զարգացման զարկերակը: Ուշադրության են արժանի վերջինիս հետևյալ խոսքերը ***՞՞Վաշխառությունը արժանի է ատելության և արգահատման քանի որ այն վերափոխում է դրամական նշանները սեփականության առարկայի՝ որի արդյունքում դրամը կորցնում է իր նշանակությունը՝ որն է փոխանակման միջոց: Մի երևույթ որը հակառակ է բնությանը՞՞:***

Երկար ժամանակ վաշխառության տարածման զսպաշապիկ են հանդիսացել կրոնները՝ Նոր և Հին կտակարաններում, ինչպես նաև Ղուրանում նշված են

վաշխառության կործանարար հետևանքների և դրա արգելման մասին: 325թ. Առաջին Նիկեյան համաժողովով արգելվել են տոկոսային գործարքները, XIII – XII – րդ դարերում տոկոս հասկացությունը արգելված է եղել Հռոմեական կայսրությունում: 850թ. Փարիզյան սինոդը բոլոր վաշխառուներին հեռացրել է եկեղեցուց և արգելել վերջիններիս հուղարկավորությունը ընդհանուր քաղաքացիական գերեզմաններում: Վերջիններս պատմության ընթացքում մի շարք երկրներում զրկված են եղել ընտրության իրավունքից: Մինչև 16-րդ դարը վաշխառությունը դատապարտված է 17 Հռոմի պապերի և 28 Համաժողովների կողմից: 14-րդ դարում Անգլիայում , ինչպես նաև Ֆրանսիայում արգելված է եղել վաշխառությամբ զբաղվելը: Հիմնականում վաշխառուական գործառույթներով զբաղվել են Լոմբարդիայի իտալացի վաճառականները, որն էլ հիմք է հանդիսացել, որ անշարժ գույքի դիմաց տրվող վարկերը անվանվեն լոմբարդային գործարքներ:

Բանկ հասկացությունը ևս ունի իտալական ծագում՝ ***«banca»*** բառը նշանակում է սեղան, որի վրա միջնադարում իտալացի վաճառականները տեղավորում էին դրամներով լի տոպրակները: Նույն ծագումն ունի նաև ***՞՞բանկրոտ՞՞*** բառը՝ երբ վաճառականներից մեկը չարաշահում էր որևէ մեկի վստահությունը, ապա սեղանը, որի շուրջ նստած էր խաբեբան շրջվում էր ***(rotto) - banco rotto:***

1286թ-ում Պիզա քաղաքում արգելված է եղել վաշխառուների բնակությունը քաղաքի շրջանակում, դատավորներին արգելված է եղել լսել վաշխառուների որևէ դատական հայց, իսկ քաղաքի բնակչությանը արգելված է եղել հյուրընկալել վաշխառուներին: Մինչև 17-րդ դարի վերջը Հոլանդիայում եկեղեցին անջատել էր վաշխառուներին քաղաքացիներից, արգելված է եղել վաշխառուների մուտքը Քյոլնի տաճար և այլն: Պատմական օրինակները անթիվ են: Այս ամենը լոկ կրոնական դրույթներ և եկեղեցական կամայականություններ չեն, այլ բացատրվում են նրանով որ այն հասարակություններում, ուր տոկոսային հարաբերությունները օրինակացված են, ուժեղները հարստանում են թույլերի հաշվին, արդյունքում հարուստները դառնում են էլ ավելի հարուստ, իսկ աղքատները ավելի աղքատանում, որը ծնում է սոցիալտնտեսական դասակարգերի թշնամություն, նախանձ և ատելություն աղքատների կողմից հարուստների նկատմամբ և մույս կողմից հարուստների արհամարանքը աղքատների նկատմամբ որպես դասակարգ: Այսինքն

վաշխառությունը ծնում է դասակարգային անհանդուրժողականություն և ատելություն: Բոլոր կրոններում գումարը փոխառությամբ՝ տոկոսով տալը – վաշխառությունը դիտարկվում է որպես անբարոյականության դրսևորում: Գումար աշխատելու այս միջոցը նախկինում և այժմ խիստ դատապարտվում է քրիստոնեության և իսլամական կրոնի կողմից: Միջնադարյան Եվրոպայում Կաթոլիկ եկեղեցին արգելել է զբաղվել վաշխառությամբ: Սա է պատճառը, որ բանկային գործունեության առաջնեկները եղել են հրեաները մասնավորապես այն պատճառով, որ հրեաների կրոնական համոզմունքները վերջիններիս արգելել են զբաղվել վաշխառությամբ միայն հրեաների հետ, իսկ այլ ազգերին տոկոսով գումար տալը միայն ողջունվել է, քանի որ հրեաների կողմից դա դիտարկվել է որպես այլ ազգերին ստրկացնելու միջոց:

Միջնադարում պետությունը փորձել է պայքարել վաշխառության դեմ սահմանափակելով բարձր տոկոսադրույքները՝ այսպես

1545թ. Անգլիայում սահմանային տոկոսադրույքը հայտարարվել է տարեկան 10%, որը 1624թ. իջեցվել է 8%, իսկ 1652թ. 6%:

1640թ. Նիդեռլանդներում սահմանվել է առավելագույն 5% տարեկան տոկոսադրույք:

1601թ. Ֆրանսիայում սահմանվել է առավելագույն 6% տարեկան տոկոսադրույք

1754թ. Ռուսաստանում սահմանվել է առավելագույն 6% տարեկան տոկոսադրույք

Ամերիկայի Միացյալ Նահանգներ վաշխառությունը ներմուծվել է անգլիացի գաղութարարների միջոցով և տարբեր նահանգներում գործել են տարբեր սահմանային տոկոսադրույքներ: (1661թ. Մասաչուսետս նահանգ- 8%, Վիրջինիա նահանգ -5%, Պենսիլվանիա նահանգ -6-10%)

Հասարակության պատմության մեջ մենք դիտարկել ենք եղել բազմաթիվ սոցիալական կատակլիզմներ, որոնք եղել են վաշխառության դեմ պայքարի արդյունք. դրանցից են՝

- Մ.Լյութերի կողմից 1517 թ. եկեղեցու ռեֆորմացիայի սկզբնավորումը:
- Միջնադարյան ՛՛*ֆլորին*՛՛-ի փլուզումը: (միջնադարյան դրամ)

- Տամպլիերներ միաբանության փլուզումը
- Չինաստանում Մին դինաստիայի թագավորության ժամանակ ժողովրդական ապստամբությունը վաշխառու – ներքինիների դեմ:
- Գերմանիայում ֆաշիստական ռեժիմի կազմավորումը Վեյմարյան հանրապետության փլուզման արդյունքում
- Հիպերինֆլյացիայի աճը և այլն

Բոլոր ժամանակներում և հասարակարգերում վաշխառուական մեխանիզմի գործողության հետևանքները միևնույն են:

Վաշխառության անդրադարձը արվեստում

Վաշխառությանը անդրադարձել է նաև արվեստը: Տարբեր գրական ստեղծագործություններում վաշխառությունը միշտ դատապարտվել է, ավելին վաշխառուին բնորոշ կերպարը իր արտացոլումն է գտել տարբեր ստեղծագործություններում իբրև անբարո, տարիքով, ագահ անձնավորություն, որի կյանքի իմաստը եղել է այլ անձանց գույքին տիրանալը և այլոց հարստահարելը:

Վերոգրյալի ապացույց կարող են հանդիսանալ հետևյալ գրական կերպարները՝ Ն.Վ. Գոգոլի ***՞Դիմանկար՞*** պատմվածքում վաշխառուն պատկերված է որպես սատանայակերպ, Ֆ.Մ. Դոստոևսկու ***՞Ոճիր և պատիժ՞*** վեպում վաշխառուն պատկերված է իբրև ՞տոկոսչի պառավ՞, որին բնորոշ է պարազիտային ապրելակերպ: Նույնատիպ նկարագրի է արժանացել վաշխառուն Ա.Ս. Պուշկինի ստեղծագործություններում երբ վերջինս նկարագրում է դժոխքը: ***՞Աստվածային կատակերգության՞*** մեջ Դանթեն հանդիպում է վաշխառուներին դժոխքի յոթերորդ պարունակում՝ պարանոցներին քսակներ կախված: Հատկանշական է, որ քսակների զինանշանները պատկանում էին Դանթեի ժամանակաշրջանում ապրած հարուստ ընտանիքներին: Վաշխառուի կերպարի տիպիկ նկարագիր է հանդիսանում նաև Օ. Բալզակի հայտնի ***՞Գոբսեկ՞*** ստեղծագործությունը:

Ժամանակակից համաշխարհային վաշխառուական համակարգ

՞՞Տոկոս ստանալով ապրում եմ ուրիշի ապագայի հաշվին: Տոկոսն աշխատում է՝ հիշիր կամ դու ես ոչնչացնում ժամանակը կամ ժամանակը ոչնչացնում է քեզ՞՞ - սա է վաշխառուի բարոյական ընտրությունը:

20-րդ դարում վաշխառություն բառի իմաստը այլակերպվել է հանձինս վաշխառությամբ զբաղվող հզոր անձանց ազդեցության, որոնք իրենց գործառույթները օրինականացնելու նպատակով հրապարակել են, որ վաշխառությունը ոչ թէ տոկոսով գումար տրամադրելն՝ ինչպես նշված է վիկիպեդիայում այլ ***՞՞առանձնապես բարձր՞՞*** տոկոսով գումար փոխառելն է: Իրականում նման ձևակերպումը նպատակ է հետապնդում քողարկել վաշխառության երևույթը, հնարավորություն տալով ինքնակամ որոշելու տոկոսի բարձր կամ ցածր լինելը, որը ինքնին հակասում է վաշխառության երևույթի ամբողջական բացահայտմանը:

Վաշխառության էությունը իրականում չի կարող փոխակերպվել ***՞՞բարձր կամ ցածր՞՞*** տոկոսի հասկացությամբ, ինչպես կինը չի կարող լինել ***՞՞քիչ կամ շատ հղի՞՞***: Վաշխառության երևույթի նկարագրման և որոշման գործընթացում տոկոսի չափաքանակի նման քանակական որոշումները նպատակ են հետապնդում մարդկանց մոլորության մեջ գցել և ինչ -որ կերպ արդարացնել վաշխառության գոյությունը:

Ժամանակակից հասարակությունում վաշխառությունը հանդիսանում է իրական չարիք և միայն փաստերի համադրմամբ կարելի է հասկանալ երևույթի վտանգավորության մասշտաբները: Համոզիչ լինելու համար բերենք մի քանի փաստեր՝

միայն միջին հաշվարկով ներկայումս Հնդկաստանում, Պակիստանում, Բանգլադեշում առկա են 50 մլն. ստրուկներ, որոնք զբաղված են արտադարական պրոցեսներում և այս թվաքանակը կազմում է տվյալ երկրների տնտեսապես ակտիվ բնակչության մոտ 10 %: Ստրկացման շարժառիթները տարբեր են, սակայն հիմնականում վերաբերվում են վաշխառությանը: Մի շարք դեպքերում աշխատողը

բռնի կերպով կցվում է տվյալ արտադրությանը, երբ հնարավորություն չի ունենում ձեռնարկատերերից վերցված տոկոսով գումարը վերադարձնելու, հաճախ ծնողները ստիպված են լինում միջնորդ հանցավոր խմբավորումների միջոցով վաճառել իրենց երեխաներին գործատուներին տոկոսով վերցված գումարի փոխարեն, դրանով իսկ վերջիններիս դարձնելով ցմահ ստրուկներ՝ համալրելով համարյա անվճար աշխատուժի շուկան և ապահովելով գերշահույթ ***՞՞տերերի՞՞*** համար:

Վաշխառության երևույթը տարածում ունի նաև զարգացած երկրներում՝ ուր վաշխառուները համագործակցելով քրեական տարրերի հետ, ֆինանսավորում են գումարի շտապ կարիք ունեցող անձանց ամսական 10 - 80 տոկոսադրույքով: Նման գործելաոճը շատ երկրներում կոչվում է ***՞՞շնաձկային գործարք՞՞*** և հետագայում գումարի վերադարձման անհնարինության պարագայում փոխառուները ստիպված են լինում կատարել վաշխառուի բոլոր պայմանները, հիմնականում տարբեր հանցագործություններ, այդ թվում սպանություն, թմրանյութերի առևտուր, տրաֆիկինգ, մադկային օրգանների առևտուր և այլն:

Փաստացի, վաշխառությունը ոչ միայն մարդու ֆիզիկական ստրկացումն է, այլև ունի տարատեսակ խորքային դրսևորումներ:

Վաշխառության ներկայիս աղետալի մասշտաբների ապացույց կարող է հանդիսանալ նաև հետևյալը՝

Իտալական մաֆիայի գումարների շրջանառությունը 2004թ. տարբեր հաշվարկներով կազմել է մոտ 100 մլրդ. Եվրո, այն դեպքում երբ վաշխառության շրջանառությունը կազմել է 13 500 մլն. եվրո ,իսկ զենքի առևտրի և մարմնավաճառության բիզնեսի շրջանառությունը կազմել է համապատասխանաբար՝4 474 և 5 104 մլն. եվրո:

Ինչ վերաբերվում է հետխորհրդային ժամանակաշրջանին , ապա 90-ական թվերին , ԽՍՀՄ –ի փլուզումից հետո , վաշխառությունը լայն տարածում գտավ նախկին ԽՍՀՄ տարածքում և տոկոսադրույքները ամսական 30-45 տոկոսից մինչև տարեկան 800- 1000 տոկոս աճ ապրեցին: Այս ամենը հնարավոր դարձավ անկատար, կոռումպացված դատաիրավական համակարգի և կրիմինալի սերտաճման շնորհիվ: Փաստացի վաշխառության երևույթը ետ վերադարձավ ավելի լայն մասշտաբներով և ավելի անմարդկային պայմաններով:

Հիմնականում վաշխառուները տոկոսով պտտեցնում էին քրեական աշխարհի և բարձրաստիճան պաշտոնյաների գումարները: Փաստացի հանցագործներն ու ավազակները վաշխառության շնորհիվ փոխակերպվեցին ռանտիեների: Հաստատաբար կարելի է ասել, որ հետխորհրդային շրջանի նուվորիշների սկզբնական կապիտալի կուտակումը կատարվել է հիմնականում վաշխառության շնորհիվ:

Վաշխառության սոցիալ- տնտեսական հետևանքները

Հասարակության սոցիալական և տնտեսական զարգացման առումով վաշխառությունը հանդիսանում է աղետալի երևույթ և հանգեցնում է բացառապես բացասական արդյունքների: Ի սկզբանե տոկոս ստանալը նշանակում է ստանալ եկամուտ առանց ծախսերի, անաշխատ: Վաշխառությունը հանդիսանում է տնտեսական և սոցիալական առաջընթացը արգելակող միջոց:

Վաշխառությունը որպես երևույթ արագացնում է փողի թանկացումը, ամրապնդում է և խորացնում սոցիալական կոնտրաստները: Այս երևույթները առավել սուր դրսևորվում են թույլ զարգացած և ծայրահեղ կոռումպացված երկրներում: Վաշխառության գործիքը՝ ***փողը,*** ապրանքային տնտեսության հիմնական կատեգորիաներից մեկն է: Փողը հանդիսանում է որպես համընդհանուր համարժեք, քանի որ նրա միջոցով հնարավոր է չափել, որոշել մյուս բոլոր ապրանքների ***արժեքը:*** Փողի դասական բնորոշումն այն է, որ այն ընդհանուր համարժեք է համարվում և կարող է փոխանակվել մյուս բոլոր ապրանքների հետ: Փող է համարվում այն, ինչը տվյալ հասարակության մեջ բոլորի կողմից փող է ճանաչվում, ընդունվում: Փողի էությունը նրանում է, որ այն համարվում է արագ իրացվելի միջոց, որովհետև յուրաքանչյուր պահի փողը կարող է վերածվել ցանկացած ապրանքի:

՞Փողը՞ ըստ էության իրենից պատմականորեն ներկայացնում է միայն վճարման միջոց, որը պարտադիր է իր անվանական արժեքով , շրջանառությամբ և չկա ու չի կարող լինել փողի մեկ այլ նշանակություն: Փողը ունի սպեցեֆիկ նշանակություն. այն հանդես է գալիս իբրև միայն վճարման միջոց՝ որպես

քաղաքացիական շրջանառության մեջ անհատույց շրջանառվող իր, այսինքն կարող է նվիրվել, տրվել անտոկոս փոխառության, կտակվել, ի պահ հանձնվել: ***(քանի որ ի պահ վերցնողը իրավունք չունի օգտվել ի պահ հանձնված գույքից)*** Այս բոլոր դեպքերում փողի նպատակային նշանակությունը չի կորում, սակայն այն վերանում է երբ փողը օգտագործում են որպես ապրանք՝ այն վաճառվում է, տրվում է վարձով՝ տոկոսով և այլն: Փողը՝ իր բնույթին հակառակ այլ նպատակով որպես վաշխառության միջոց օգտագործելը հանգեցնում է մի շարք ծանր սոցիալ-տնտեսական հետևանքների:

Տնտեսական տեսակետից վաշխառությունը հանդիսանում է

1. Ինֆլյացիայի պատճառ[1]
2. Տնտեսության սնանկացման պատճառ
3. Առևտրի գերակայության պատճառ մույս տնտեսական ոլորտների նկատմամբ[2]
4. Արդյունաբերության ոչնչացման պատճառ:
5. Հայաստանում ինչպես նաև ցանկացած հասարակարգում մարդկանց միջև տնտեսական անհավասարության խորության պատճառ:
6. Աշխատուժի ինֆլյացիայի պատճառ
7. Վաշխառուների կողմից քաղաքացիների գլոբալ տնտեսական և սոցիալական ստրկացման պատճառ:
8. Որպես մարդու շահագործման երևույթ մարդու կողմից

Ինչպես տնտեսագիտությունը, այնպես էլ իրավագիտությունը նույնպես չի դիտարկում փողը որպես ապրանք որը կարելի է տալ վարձով, քանի որ, ինչպես վերը նշեցինք փողը միայն վճարման միջոց է:

Առանց վաշխառության համակարգի վերացման ,որի նպատակն է քրեաօլիգարխիկ պետականության կազմավորումը իր ամբողջ տձևությամբ հասարակ քաղաքացու հանդեպ, որևէ սոցիալ-տնտեսական բնույթի խնդրի լուծում դառնում է անհնարին:

---

[1] Վաշխառության հետևանքով աճում է դրամային ծավալը, որը ապահովված չէ ապրանքով, միևնույն ժամանակ տոկոսով վերցված գումարի տոկոսը ներառվում է հետագա ապրանքի գնի մեջ բարձրացնելով վերջինիս գինը խթանելով գնաճը և ինֆլյացիան:

[2] Վաշխառության՝ բարձր տոկոսադրույքները խթանում են առևտուրը և արգելակում արդյունաբերության զարգացումը ,քանի որ արտադրության կազմակերպման համար աբիրաժեշտ են երկարաժամկետ և ցածր տոկոսադրույքով վարկեր

Վաշխառությունը որպես կազմակերպված հանցագործության և մարդու կողմից մարդու շահագործման դրսևորում

Կարելի է փաստել, որ վաշխառությունը ողջ աշխարհում հանդիսանում է կազմակերպված տնտեսական հանցագործության ձև և միևնույն ժամանակ հանդիսանում է այլ հանցագործությունների կատարման շարժառիթ: Փաստացի վաշխառուն մոլորության մեջ է գցում տուժողին այն հիմքով որ փողը ապրանք է, այլ ոչ թե վճարման միջոց և այդ հիմքով հետ է պահանջում տուժողից ոչ միայն իր փողը այլ նաև տուժողի փողը: Սա է պատճառը որ վաշխառությունը արդարացի արգելված է մի շարք երկրներում:

Վաշխառությունը որպես մարդու շահագործման երևույթ մարդու կողմից արգելված է նաև միջազգային իրավունքի կողմից: Այսպես ***՞22.11.1969թ. Մարդու իրավունքների մասին Ամերիկյան կոնվենցիան՞***[3] հայտարարում է

<u>Հոդված 21. Սեփականության իրավունք</u>

1. Ամեն ոք ունի իրավունք ունենալ և օգտվել սեփականությունից, որը պաշտպանված է օրենքով և ծառայում է հասարակության շահերին:
2. Որևէ մեկը չի կարող զրկվել իր սեփականությունից, այլ կերպ քան օրենքով սահմանված կարգով իր սեփականության դիմաց արդարացի հատուցում ստանալով:
3. Վաշխառությունը ինչպես նաև մարդու կողմից մարդու շահագործման այլ երևույթները արգելված են օրենքով:

[3] http://www.cidh.org/Basicos/English/Basic3.American%20Convention.htm

Վաշխառության տարածումը Հայաստանում

Հայաստանի Հանրապետությունում վաշխառությունը ձեռք է բերել մեծ տարածում XX դարի 90-ական թվականներին: Խորհրդային տնտեսական համակարգի փլուզումը հանգեցրեց խորհրդային շրջանում կայացած նաև միջտնտեսական կապերի փլուզման, որի արդյունքում խարխլվեցին Հայաստանում բավականին կայացած արդյունաբերության հիմքերը, որը և հանգեցրեց արդյունաբերական ձեռնարկությունների փակման և աշխատուժի հզոր զանգվածի դուրս մղման: Սրան նպաստեց նաև տրանսպորտային ճանապարհների շրջափակումը և այս ամենը հանգեցրեց նրան,որ նախկինում արդյունաբերությունում զբաղված ՀՀ քաղաքացիների մի ստվար բազմություն հայտնվեց փողոցում՝ գործազուրկի կարգավիճակում: Մյուս կողմից մի շարք պետական այրեր, որոնք անաշխատ եկամուտներով դիզել էին մեծ կարողություններ դեռ խորհրդային շրջանում, որպես իրենց անաշխատ եկամուտները օրինականացնելու միջոց և այդ օրինականացման ճանապարհին էլ ավելին հարստանալու հարմար ձև էին դիտարկել վաշխառությունը, որը տարիների ընթացքում լինելով անպատժելի, այժմ ձեռք է բերել էլ ավելի այլասերված և կազմակերպված դրսևորումներ: ՀՀ քաղաքացիները դառնալով գործազուրկ, կորցնելով իրենց գոյությունն ապահովելու միջոցները, փորձեցին իրենց գոյությունն ապահովելու համար դիմել առևտրի, որի համար անհրաժեշտ էին ֆինանսական միջոցներ: 90-ական թվականներին ՀՀ-ում նոր էր ձևավորվում բանկային համակարգը, սպառողական վարկի հասկացությունը դեռ չէր ձևավորվել: Այս ամենը պարարտ հող ստեղծեց երկրում վաշխառուների բանակի կայացման համար: Իրենց գոյությունը պահպանելու համար, քաղաքացիների մի մասը փորձում էր առևտրով զբաղվելու համար հայթայթել ֆինանսական միջոցներ, որի միակ հնարավորությունն էր դիմել մասնավոր անձանց որոնք տոկոսով գումար էին տրամադրում: Ի սկզբանե սա միտված էր երկրում արտադրության և արդյունաբերության վախճանին, քանի որ տոկոսով գումար վերցնողները որպես մայր գումարի և տոկոսի վերադարձման միակ միջոց դիտարկում էին առևտրով զբաղվելը, քանի որ միայն առևտուրն էր, որ կարող էր ապահովել վերցրած

գումարի արագ շրջանառությունը, բարձր եկամտաբերությունը, որն էլ անհրաժեշտ պայման էր տոկոսով վերցված գումարի պարագայում: Տոկոսով տրվող գումարի բարձր տոկոսադրույքը ի սկզբանե բացառում էր տվյալ գումարները արտադրության մեջ ներդնելու փաստը, քանի որ արտադրության պարագայում ներդրված ֆինանսական միջոցների և դրա եկամուտի ետ վերադարձը ժամանակային առումով ապրիորի չէր կարող համապատասխանել տոկոսով տրված գումարների նախապայմաններին: 90-ականներին ՀՀ-ում ընդունված էր ամսական 5-30 % ամսական տոկոսադրույքը, որը մի կողմից նպաստում էր ներկրված ապրանքների գների անհիմն թանկացմանը, այդ թանկացման շնորհիվ հասարակության մի մասի անհիմն հարստացմանը հասարակության մյուս մասի աղքատացման հաշվին: Այս պարարտ հողի վրա էլ նախկին խորհրդային չինովնիկները վերածվեցին ***՝՝մինի բանկերի՝՝*** և խորհրդային տզրուկներից վերածվեցին հետխորհրդային հասարակության տզրուկների: Վաշխառության երևույթը միշտ բնորոշ է եղել այն խավին, որը երբևէ չի մասնակցել հասարակության կայացմանը, երբևէ չի ներդրել իր ստեղծարար աշխատանքը, այլ իր ունեցած ստվերային գումարները վաճառելով նպաստել է տվյալ հասարակության սոցիալ- տնտեսական գահավիժմանը դեպի տնտեսական անդունդ: Քանի որ Հայաստանի իշխանություններն անհաղորդ են եղել քաղաքացիների սոցիալական և տնտեսական խնդիրներին, երբևէ չեն առաջարկել այդ խնդիրների լուծման կառուցողական, ֆինանսական և սոցիալական մեխանիզմներ, հանդուրժել են հասարակությանը թալանած ու թալանող չինովնիկներին, որոնք ինչ-որ կերպ պետք է օրինականացնեին իրենց թալանը: Փաստացի, պետության հովանավորչությամբ ստեղծվել են ամենաբարենպաստ պայմանները վաշխառուների կաստայի ձևավորման, գոյության և բարգավաճման համար:

Եթե նախկինում վաշխառուները գործում էին գաղտնի, անկազմակերպ, միայնակ, ապա տարիների ընթացքում դրանք վերածվել են հանցավոր խմբավորումների, որոնք ղեկավարում են բարձրաստիճան պաշտոնյաներ: Կարելի է ասել որ հետզհետե ստեղծվում է պետություն պետության մեջ, որպեսզի կարողանան անխափան իրականացնել ստվերային գումարների շրջանառությունը: Եթե դիտարկենք զարգացած երկրների փորձը, ապա կարող ենք ասել որ վաշխառությունը վերացված է, քանի որ գոյություն ունեն առողջ դրամավարկային

քաղաքականություն իրականացնող բանկեր և քաղաքացիները իրենց սոցիալական և տնտեսական կարիքները հոգալու համար դիմում են բանկերին: Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը, ապա մեծաքանակ բանկերը Հայաստանում կատարում են զուտ լոմբարդի և ***՝՝լվացքատան՝՝*** ֆունկցիա և փաստորեն իրենք էլ են զբաղված վաշխառությամբ՝ բավականին բարձր տոկոսով վարկեր տրամադրելով, գցում են մեր քաղաքացիներին ֆինանսական ստրկության մեջ: Փաստացի ՀՀ-ում առկա բանկային համակարգը նույնպես պարարտ հող է ստեղծում վաշխառության զարգացման համար մի կողմից, իսկ մույս կողմից վաշխառությանը զարկ է տալիս մեր օրենսդրությունը իր անգործությամբ և ՀՀ վճռաբեկ դատարանը իր նախադեպային որոշումներով, որոնք ամեն կերպ միտված են պաշտպանելու վաշխառության անխափան տարածումը և հետագա զարգացումը Հայաստանում: ՀՀ քաղաքացիները ի դեմս բանկերի հանդիպում են մի պատնեշի, որի արդյունքում ուղորդվում են դեպի վաշխառուները առանց հասկանալու որ դա իրենց ավարտի սկիզբն է, ավելին՝ մեր դիտարկած վաշխառուական խմբավորումներում հիմանկանում առկա են բանկի աշխատակիցներ, որոնք ելնելով իրենց անձնական ֆինանսական շահագրգռվածությունից և ուղորդում են բանկ դիմած հաճախորդներին դեպի անհատ վաշխառուները, վերջիններից պահանջելով Հայաստանում գոյություն չունեցող բարձր եկամուտներ փաստող տեղեկանքներ: Իր կարիքները հոգալու կամ առևտրային գործունեություն ծավալելու համար հավելյալ գումարի կարիք ունեցող քաղաքացիները ստիպված դիմում են վաշխառուներին, քանի որ վերջիններս տրամադրում են ***՝՝պարզեցված վարկեր՝՝,*** այսինքն չեն պահանջում հավելյալ փաստաթղթեր այլ հետաքրքված են միայն քաղաքացու սեփականությամբ: Քաղաքացիները դիմելով վաշխառուներին ստիպված են լինում վերջիններիս պահանջով կնքել իրենց սեփականության իրավունքով պատկանող գույքը շինծու առք ու վաճառքի միջոցով օտարման պայմանագրեր, առանց գիտակցելու դրա հետևանքները: Մեծ դեր է խաղում նաև մեր հասարակության ցածր իրավագիտակցության մակարդակը՝ իրավական գիտելիքների պակասը: Երբ բանկերի քաշքշուկից հոգնած քաղաքացին ստիպված դիմում է վաշխառուին, ապա տեսնելով վաշխառուների ճոխ ապրելակերպը և չլինելով իրազեկված իր իրավունքների մասին, ընկնում է վաշխառուների թակարդը, առաջինը՝ չպատկերացնելով այդ ճոխության հիմքերը, չի կասկածում որ

նման ապրելակերպ ունեցող մարդը կարող է իրեն խաբել և երկրորդը՝ ելնելով գիտելիքների պակասից և գումարի կարիքից համաձայնվում է վերջիններիս առաջարկած անմարդկային, ի սկզբանե իր համար անբարենպաստ պայմաններին: Այն է՝ իրեն պատկանող, հաճախ իր միակ սեփականությունը, ***(իր կարծիքով)*** շինծու առք ու վաճառքի գործարքի միջոցով և վաշխառուի համոզմամբ օտարում է վաշխառուին կամ նրա մատնանշած անձին, առանց գիտակցելու, որ այդ իսկ վարկյանից զրկվում է իր գույքի նկատմամբ սեփականության իրավունքից: Վաշխառուական խմբավորումները զարգացման ընթացքում վերածվել են կազմակերպված մի համակարգի:

Փորձենք սխեմատիկ պատկերել վաշխառության գործընթացը Հայաստանում.

Կազմակերպված վաշխառուական հանցախումբ



Տվյալ սխեմայից ակնհայտ է դառնում, որ վաշխառուները ունեն հստակ կազմակերպված աշխատանքի բաժանում: Ելնելով այն փաստից, որ գումարի կարիք ունեցող քաղաքացին առաջնահերթ դիմում է բանկ, լոմբարդ, հաճախ անշարժ գույքի գործակալություն, վաշխառուները այս բոլոր ոլորտներից իրենց խմբավորումներում ընդգրկում են վերընշված կառույցների աշխատակիցներ:

Քաղաքացին դիմելով բանկ, գումար ստանալու ակնկալիքով, չկարողանալով ապահովել բանկերում պահանջվող փաստաթղթերի քանակը, հաճախ բանկի աշխատակցի կողմից ուղորդվում է դեպի վաշխառուն: Այս դեպքում որպես միջնորդ հանդես է գալիս բանկի աշխատակիցը՝ ստանալով վաշխառուի կողմից տրամադրված գումարի 10 տոկոսի չափով միջնորդավճար: Եթե քաղաքացին չի դիմում բանկ այլ այցելում է գրավատուն, ապա գրավատանը վերջինս իրազեկվում է որ ըստ ***ՀՀ գործող գրավատների մասին օրենքի*** (***Ընդունվել է 03.12.2003թ.***)[4] իր սեփականությունը հանդիսացող անշարժ գույքը չի կարող հանդիսանալ գրավի առարկա գրավատանը և հաճախ գրավատնից ուղորդվում է դեպի վաշխառուն, այս դեպքում գրավատան աշխատակիցն է հանդիսանում որպես միջնորդ և վաշխառուի կողմից ստանում է տրամադրված գումարի 10 տոկոսի չափով միջնորդավճար : Եթե քաղաքացին իր գույքը վաճառելու կամ գնահատելու ցանկությամբ հայտնվում է անշարժ գույքի գործակալության տեսադաշտում , ապա վաշխառուի գործընկեր - անշարժ գույքի գործակալությունում աշխատող բրոկերները նորից հանդես են գալիս որպես միջնորդ քաղաքացու և վաշխառուի միջև նույն տրամադրվող գումարի 10 տոկոս միջնորդավճարի չափով;Այսպիսով, ֆինանսական միջոցների կարիք ունեցող քաղաքացին շատ հաճախ հայտնվում է ռիսկային գոտում՝ ընկնելով վաշխառուական խմբավորումների ճիրանները: Վաշխառուական կազմակերպված խմբավորումները իրենց էվոլյուցիաի ընթացքում համալրվում են նաև իրենց կամակատար նոտարներով, ինչպես նաև իրենց հետագա անխափան աշխատանքը ապահովող դատավորներով, ոստիկանության աշխատակիցներով, քննիչներով, դատախազներով և ***՞՞սեփական՞՞*** իրավաբաններով: Վերջին տարիների մեր դիտարկումներից ելնելով ավելորդ չենք համարում նշել որ վաշխառուական խմբավորումները համալրվել են նաև բարեխիղճ ձեռք բերողների ինստիտուտով: Այսպես՝ երբ քաղաքացին վաշխառուի պնդմամբ շինծու առք ու վաճառքի պայմանագրով օտարում է իր սեփականությունը առանց գիտակցելու, որ այդ իսկ պահից զրկվել է իր սեփականությունից , հետագայում ամիսներ կամ տարիներ վճարում է տոկոսադրույքները և ի վերջո հասնում է մի պահ, երբ վերջինս հասկանալով, որ այլևս ի զորու չէ վճարել տոկոսները փորձում է

[4] http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1828

վաշխառուի հետ գալ համաձայնության , որպեսզի վերջինիս թույլատրությամբ վաճառի դե ֆակտո դեռ իրեն պատկանող իսկ դե յուռե վաշխառուի անվամբ ձևակերպված գույքը, ապա անսպասելիորեն պարզում է, որ իր սեփականությունը վաղուց արդեն վաճառված է մեկ այլ կամ մի քանի այլ անձանց՝ ***՞՞վաշխառուի բարեխիղճ ձեռքբերողներին՞՞:*** Այն պահին, երբ փոխառուն այլևս չի կարողանում վճարել տոկոսները և հիշում է իր՝ իր կարծիքով գրավադրված, սակայն իրավական առումով վաշխառուին վաճառված գույքի մասին, վաշխառուն անհապաղ դիմում է դատարան իրեն պատկանող սեփականությունից վերջիններիս վտարման պահանջով: Միանշանակ այս բոլոր հայցերը բավարարվում են և քաղաքացիները հայտնվում են փողոցում, հասկանալով, որ իրենք խաբվել են և դարձել են խարդախության զոհ: Քիչ չեն նաև դեպքերը, երբ գրավատները ապօրինի շրջանառության են վերցնում վաշխառուների գումարները, ապահովելով դրանց ստվերային շրջանառությունը, խուսափում են հարկերից, և համագործակցելով վաշխառուների հետ ստանում են գերշահույթ:

Վերոնշյալը ապացուցվում է մեր կողմից կատարված սեփական հետաքննությամբ, որի արդյունքում պարզվել է, որ որոշ գրավատներ գերշահույթ ստանալու, հարկերից խուսափելու ինչպես նաև ստվերային ոլորտում գործելու նպատակով մեծաքանակ գումարներ են վերցնում անհատ վաշխառուներից ցածր տոկոսադրույքով և հետագայում 4-7 տոկոսով տրամադրում քաղաքացիներին, որի արդյունքում փաստացի՝

1. Հաճախ գրավատունը կատարում է ընդամենը ցուցանակի դեր մեծաքանակ արտարժույթի ստվերային շրջանառության համար:

2. Հանդիսանում է ապօրինի ճանապարհով ձեռք բերված դրամական միջոցների ***՞՞լվացքատուն՞՞:***

3. Չարաշահելով քաղաքացիների վստահությունը և օգտվելով վերջիններիս իրավական գիտելիքների ցածր մակարդակից, կնքում է նախապես անօրինական գործարքներ՝ ***ՀՀ քր օր. 213 հոդվածի*** [5] պահանջները խախտելով զբաղվում է վաշխառությամբ (ՀՀ Օրենքը գրավատների և գրավատնային

[5] http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1349

գործունեության մասին / ընդունվել է 03.12.2003թ.) անշարժ գույքի առք ու վաճառքի գործարքներ:

4. Օգտագործելով այս սխեմաները չարամտորեն խուսափում է հարկերից գերշահույթ ստանալու նպատակով:

Վաշխառությունը որպես խարդախության միջոց:

Մենք դիտարկում ենք վաշխառությունը, որպես մի խումբ անձանց կողմից խարդախությամբ այլ անձանց պատկանող սեփականությանը տիրանալու միջոց:

Այսպես՝ վաշխառուական խմբավորումները , նախապես ուսումնասիրելով իրենց դիմած անձանց սեփականության իրավունքով պատկանող գույքի արժեքը, տրամադրում են տոկոսով գումար այդ գույքի իրական արժեքի մի մասի չափով, բարձր տոկոսադրույքով, նախապես պարտադրված շինծու առք ու վաճառքի պայմանագրով, որը իրականում պետք է կնքվի, որպես այդ գույքի գրավի պայմանագիր և տիրանում են տվյալ քաղաքացու գույքին: Հետագայում, փոխառուն ամիսներ շարունակ վճարում է բարձր տոկոսադրույքեր վերցված գումարի փոխարեն տվյալ գույքի արժեքը նվազեցնելով վաշխառուի համար, փաստացի շատ դեպքերում վաշխառուն տիրանում է գույքին անվճար: Ավելին, նախապես մտադրություն ունենալով տիրանալ տվյալ գույքին, վաշխառուները չեն կնքում փոխառության պայմանագիր, երբևէ չեն նշում իրենց կողմից տրամադրված գումարի տոկոսադրույքները այլ շինծու առք ու վաճառքի պայմանագրի շրջանակներում որպես գույքի գնման գին նշվում է միանգամից այն գումարը, որը կազմված է մայր գումարից և ենթադրելի տոկոսադրույքներից որոնք պետք է վճարվեն ենթադրելի ժամանակահատվածի ընթացքում: Օրինակ՝ եթե քաղաքացի Ա-ն վաշխառու Բ-ից պարտքով վերցնում է 10.000 ԱՄՆ դոլար ամսական 10 տոկոս տոկոսադրույքով, ապա գրավադրում է գույք 20.000 ԱՄՆ դոլար արժողությամբ ըստ շուկայական գների՝ ենթադրենք 1 տարի ժամկետով, ապա առք ու վաճառքի պայմանագրում նշվում է որպես գույքի ձեռք բերման գին 22.000 ԱՄՆ դոլար: Միևնույն ժամանակ, բոլոր մեր ուսումնասիրած դեպքերում, քաղաքացի Ա-ն

վաշխառուի միջնորդին միանվագ վճարում է 10.000 ԱՄՆ դոլարի 10 տոկոսը՝ 1000 ԱՄՆ դոլար: Այսպիսով քաղաքացի Ա-ն իր 20.000ԱՄՆ դոլարանոց գույքի դիմաց ստանում է առձեռն 9.000 ԱՄՆ դոլար, 1 տարի վճարում է 12.000 ԱՄՆ դոլար (ամսական 10 տոկոս - 1000 ԱՄՆ դոլար) փաստորեն մեկ տարի անց վաշխառու Բ-ն անվճար տիրանում է քաղաքացի Ա-ի գույքին, իսկ քաղաքացի Ա-ն դեռ վաշխառու Բ-ին մնում է պարտք 22.000 ԱՄՆ դոլար – այն արժեքը որը նշված է առ ու ծախի պայմանագրում: Փաստորեն՝ ի սկզբանե վաշխառուական խմբավորումը քաղաքացու համար ստեղծում է ակնհայտ անբարենպաստ պայմաններ հասկանալով , որ քաղաքացի Ա-ն երբևէ չի կարողանալու ետ գնել իր գույքը իսկ եթե վերջինս նույնիսկ կարողանա ինչ- ինչ ճանապարհներով ետ գնել գույքը , ապա պետք է վճարի թե մայր գումարը 10.000 ԱՄՆ դոլարը, թե տոկոսները 12.000ԱՄՆ դոլարը այսինքն այն ինչ նշված է շինծու առք ու վաճառքի պայմանագրում:

Փաստացի վաշխառության տոկոսը միշտ գերազանցում է հանրային արտադրողականության տոկոսը (տարեկան 3-5%) և կուտակվում է վաշխառուների գրպաններում՝ժողովրդի սեփականությունը կենտրոնացնելով վերջիններս մոտ:

Վաշխառությունը որպես կոռուպցիաի դրսևորում:

Մենք գնահատմամբ, վաշխառությունը կոռուպցիայի դրսևորում է, քանի որ մեր դիտարկած ավելի քան 100 դեպքերում բոլոր վաշխառուները հանդիսանում են նախկին և ներկա չինովնիկներ: Ելնելով ՀՀ-ում սահմանված պետական աշխատողների աշխատավարձերի չափից անհնար է պատկերացնել որ աշխատավարձով ապրող չինովնիկները կարող են ունենալ միլիոնավոր դոլարների հասնող օրինական եկամուտներ: Այսինքն լինելով պետական համակարգի աշխատողներ վերջիններս կոռուպցիոն գործարքների արդյունքում ձեռք բերված իրենց եկամուտներն է ,որ փորձում են բազմապատկել և օրինականացնել վաշխառության միջոցով: Այս հանգամանքը պետք է հետաքրքրեր իրավապահ մարմիններին , որոնք և կոչված են պայքարելու կոռուպցիաի դեմ, սակայն վերջիններս զբաղված են վաշխառուների շահերի պաշտպանությամբ: Մեր դիտարկած ավելի քան 20 դեպքում որևէ քննչական մարմին հետամուտ չի եղել

պարզելու մեծաքանակ գումարների ծագման աղբյուրը, որի պարզման արդյունքում ակնհայտորեն կբացահայտվեին այլ հանցագործություններ առընչվող գումարների ծագման հետ:

Վաշխառությունը որպես փողերի լվացման միջոց:

Ինչպես վերը նշեցինք վաշխառուները տոկոսով տալիս են կոռուպցիաի և այլ անօրինական և անաշխատ , զարտուղի ճանապարհներով ձեռք բերված իրենց միջոցները և վաշխառությունը հանդիսանում է այդ գումարները օրինականացնելու ինչպես նաև այդ գործընթացում գերշահույթ ստանալու իդեալական մեխանիզմ: Վարձու մարդկանց միջոցով կատարելով մի շարք շինծու գործարքներ, ի վերջո քաղաքացիների գույքը հայտնվում է վաշխառուների կամ նրանց ազգականների անվամբ գրանցված: Այսպիսով վաշխառության արդյունքում, խարդախությամբ ձեռք բերված անշարժ գույքերի միջոցով օրինականացվում են հանցավոր ճանապարհով չինովնիկների և այլ հանցագործ տարրերի ձեռք բերված բազմամիլիոն ֆինանսական միջոցները

Վաշխառությունը որպես ստվերային բիզնեսի շարժիչ ուժ:

Տարիներ շարունակ մենք ականատես ենք որ ՀՀ իշխանությունները, իբրև պայքարում է տնտեսության մեջ առկա ստվերի դեմ, փորձելով հարկային դաշտ բերել մանր ու միջին ձեռնարկատերերին: Անհասկանալի է, որ այս պայքարի ընթացքում անտեսվում է մի այնպիսի երևույթ ինչպիսին է վաշխառությունը: Այն որ կառավարությունը փորձում է հարկային դաշտ բերել նույնիսկ կրկնուսույցին, կոշկակարին ու թիթեղագործին շատ գովելի է, սակայն անհասկանալի է որ ամսական 10-150.000 ԱՄՆ դոլար եկամուտ ստացող վաշխառուները դուրս են մնում հարկային մարմինների տեսադաշտից: Որպես ապացույց կարելի է դիտարկել Կենտրոն և Նորք -Մարաշ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում քննվող հայտնի *՞՞ֆինանսական բուրգի՞՞* և ***՞՞գեներալիտետի՞՞*** կողմից տոկոսով տրված գումարների առիթով հարուցված քրեական գործը, որի

շրջանակներում նախագահող դատավորը նույնիսկ չանդրադարձավ այն փաստին երբ ամբաստանյալը հայտարարեց որ ամսական 150.000 ԱՄՆ դոլարի չափով տոկոսներ է վճարել ոստիկանության բարձրաստիճան նախկին աշխատակիցներին նրանցից վերցրած գումարի համար: Փաստորեն մեծ գումարների չհաշվառված շրջանառությունը մեր երկրում չի դիտարկվում որպես ստվեր: Եվ սա կրկնվող երևույթ է: Իրավապահ մարմինները իրենց անհաղորդ կեցվածքը դեպի վաշխառություն բացատրում են այն փաստով, որ սա ընդհամենը գործարք է քաղաքացիների միջև, զրոյացնելով պետության դերը որպես քաղաքացու իրավունքների պաշտպանության երաշխիք: Սատար կանգնելով վաշխառուներին վերջիններս մեզ դիմակայում են բերելով այն փաստարկը, որ քաղաքացիները չափահաս են և կամավոր են դիմում վաշխառուներին և որ դա քաղաքացու ընտրությունն է , այդ իսկ պատճառով էլ պետությունը ի դեմս իրավապահ համակարգի պարտավոր չէ զբաղվել վաշխառության դեպքերը բացահայտելու ուղությամբ: Այս առումով ցանկանում ենք նշել, որ թմրամոլներն էլ նույնպես կամավոր են դիմում թմրավաճառին թմրանյութ ձեռք բերելու ակնկալիքով: Այսինքն ելնելով մեր իրավապահ մարմինների տրամաբանությունից պետք է դիտարկենք թմրանյութի վաճառքը և շրջանառությունը որպես քաղաքացիաիրավական հարաբերություն քանի որ այն նույնպես կատարվում է կամավոր սկզբունքով:

Չէ որ երկու դեպքում էլ կատարվում է կամավոր գործարք քաղաքացիների միջև՝ ապօրինի, ստվերային շրջանառություն՝ մի դեպքում դրամի մյուս դեպքում թմրանյութի: Երկու դեպքերում էլ գործարքի մասնակիցները գործում են ստվերային տնտեսության դաշտում և ունեն գերշահույթ ստանալու նպատակ: Անհրաժեշտ է փաստել, որ դրամի ստվերային ապօրինի շրջանառությունը խարխլում է պետության և տնտեսության հիմքերը և հանդիսանում է տնտեսական ճգնաժամի առաջին գրավականը:

Վաշխառությունը որպես ապօրինի ձեռնարկատիրություն:

Վաշխառությունը հանդիսանում է որպես ապօրինի ձեռնարկատիրության կարկառուն օրինակ: ***2001 թվականի մայիսի 30-ին ընդունված «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքը***[6] սահմանում է Հայաստանի Հանրապետությունում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները և կարգավորում է լիցենզավորման հետ կապված հարաբերությունները: Նշված օրենքի 43-րդ հոդվածով սահմանված է Հայաստանի Հանրապետությունում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների ցանկը: Նշված ցանկում, որպես լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ, նշված է նաև բանկային և ֆինանսավարկային կազմակերպությունների (բանկային գործունեություն, գրավատների կազմակերպում, վարկային կազմակերպությունների գործունեություն և այլն) բնագավառը:

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքը նաև սահմանում է լիցենզավորման սկզբունքները և նպատակները: Այդպես, լիցենզավորման սկզբունքներն են՝

1) Անձանց իրավունքների, օրինական շահերի, բարքերի և առողջության պաշտպանությունը, պետության պաշտպանության և անվտանգության ապահովումը.

2) Հայաստանի Հանրապետության տարածքում տնտեսական գործունեության բնագավառում միասնական քաղաքականության ապահովումը և մեկ միասնական լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների ցանկի սահմանումը.

3) Լիցենզավորման միասնական կարգի և սկզբունքների սահմանումը.

4) Լիցենզավորման հրապարակայնությունը.

5) Լիցենզավորման գործընթացի օրինականության ապահովումը.

6) Լիցենզավորման գործընթացի պարզեցումը և թափանցիկության ապահովումը.

---

[6] http://parliament.am/legislation.php?sel=show&ID=1719&lang=arm

7) Լիցենզավորված անձանց կողմից լիցենզավորման ենթակա գործունեության պահանջների խախտման համար պատասխանատվության միասնական չափանիշների և տեսակների սահմանումը:

Գործունեության առանձին տեսակներով զբաղվելու լիցենզավորման նպատակներն են՝

1) Սպառողների իրավունքների պաշտպանությունը.

2) Զարգացող շուկայական հարաբերությունների կարգավորմանը նպաստելը.

3) Ապրանքների և ծառայությունների որակի բարձրացումը.

4) Անձանց կյանքին, առողջությանը, գույքին, պետության և հասարակության շահերին, բնության, մշակութային ժառանգության պահպանությանն առավել վտանգի սպառնալիքով հղի գործունեության տեսակներով զբաղվողների նկատմամբ հսկողության իրականացումը.

5) Միջազգային անվտանգության ապահովման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով լիցենզավորված անձանց գործունեության նկատմամբ հսկողության իրականացումը:[7]

Վաշխառությունն իրենից ներկայացնում է ֆինանսական շրջանառության հետ կապված գործունեություն, որը տարբեր դեպքերում իրականացվում է տարբեր ձևերով և ունենում է տարբեր դրսևորումներ: Վաշխառությամբ զբաղվողներն ըստ էության իրականացնում են վարկ տրամադրելու գործունեություն: Հիմնականում տոկոսով գումարները տրամադրվում են գույք գրավադրելու պայմանով: Անկախ նրանից, թե կոնկրետ իրավիճակում ինչ ձևով է իրականացվում վաշխառությունը, այն հանդիսանում է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեություն:

Քանի որ վաշխառությունն իրականացվում է այդ գործունեության համար նախատեսված լիցենզավորման ընթացակարգերի խախտմամբ, վաշխառությամբ խախտվում են լիցենզավորման բոլոր սկզբունքներն ու նպատակները, ինչը նշանակում է, որ վաշխառությամբ խախտվում են անձանց իրավունքները, օրինական

[7] http://parliament.am/legislation.php?sel=show&ID=3680&lang=arm

շահերը, խախտվում է պետության պաշտպանությունը և անվտանգությունը, վաշխառուներն իրենց գործունեությունն իրականացնում են պետական վերահսկողությունից դուրս, խախտումների համար պատասխանատվության չեն ենթարկվում, վաշխառուների հետ գործարքներ կնքող սուբյեկտների իրավունքները պետական պաշտպանության տակ չեն գտնվում, պետության ներսում շուկայական հարաբերությունների զարգացումը տուժում է:

Վաշխառությունը որպես արտագաղթի շարժիչ ուժ:

Վաշխառությունը իրականում հանդիսանում է ՀՀ -ում արտագաղթի հիմնական պատճառներից մեկը, քանի որ ՀՀ քաղաքացիները զրկված են պետության երաշխիքներից իրենց հիմնական՝ սահմանադրորեն ամրագրված սեփականության իրավունքի վերաբերյալ, ունեզրկվում են երկրում անպատիժ գործող խարդախների ու վաշխառուների խմբավորումների կողմից, դիմելով դատարաններ իրենց խախտված իրավունքների վերականգման համար միանշանակ հանդիպում են խարդախների, վաշխառուների, չինովնիկների, դատավորների և իրավապահ մարմինների կողմից կազմված կոալիցիային, և հուսալքված ու ունեզրկված, իրենց գոյությունը պահպանելու նպատակով բռնում են պանդխտության ճանապարհը: Հասարակության արագ տեմպերով ունեզրկումը բերում է աղքատության կտրուկ աճի: Վիճակագրական տվյալներով Հայաստանում աղքատությունը կազմում է 35 տոկոս: Այս ցուցանիշով մեր երկիրը 3 անգամ ավելի առաջ է քան Ադրբեջանը ուր աղքատության ցուցանիշը կազմում է 11 տոկոս:

Մեր կազմակերպությունը այս տարիների ընթացքում բազմիցս օդանավակայանում՝ արտագաղթի դիմողների շրջանում անցկացրել է բանավոր հարցումներ ըստ որի պարզ է դարձել որ արտագաղթող տաս ընտանիքներից յոթը լքում են հայրենիքը ունեզրկման և իրավական անարդարության պատճառով: Փաստորեն, վաշխառությունը որպես ՀՀ քաղաքացիների ունեզրկման միջոց անպատիժ մնալով վերածվում է որպես արտագաղթի հիմնական պատճառ:

Հայաստանում ծնվածների 25%-ը՝ մոտ 937 հազար մարդ, 2015թ. ապրել է Հայաստանի սահմաններից դուրս: Այս ցուցանիշով Հայաստանը աշխարհում 4-րդ

տեղում է՝ Բոսնիա եւ Հերցեգովինայից, Ալբանիայից եւ Ջամայկայից հետո: Հայաստանից մեկնած միգրանտների գերակշռող մասը՝ մոտ 56%-ը, հանգրվանել է Ռուսաստանի Դաշնությունում: Եվրոպական երկրներին բաժին է ընկնում միգրանտների մոտ 15%-ը, ԱՄՆ-ին եւ Կանադային՝ 9.5%-ը, իսկ 19.5%-ը բաժին է ընկել այլ երկրներին:



Վաշխառությունը որպես ծանր հանցագործությունների շարժառիթ:

Վաշխառությունը քրեածին երևույթ է՝ այն իրականում ծնում է մի շարք այլ ծանր հանցագործություններ: Մեր դիտարկած դեպքերում քիչ չեն վաշխառուների կրիմինալ հովանավորների կողմից ***ժամանակին տոկոսը չփակող*** քաղաքացիների նկատմամբ բռնության դեպքերը, որոնք ինչպես միշտ անպատիժ են մնում իրավապահ մարմինների կողմից: Օրինակ՝ մեզ դիմած Գյումրու բնակիչ Մարիամ Բոյաջյանը, ինչպես նաև Գյումրու այլ քաղաքացիներ նշել են որ ոմն Մելադա Սարգսյան, որը հայտնի վաշխառու է Գյումրի քաղաքում և վաշխառում է իր գումարները ամսական 15 տոկոսով, իր ***՞՞զոհերին՞՞*** ահաբեկում է Գյումրիում հայտնի,միջազգային քրեական հեղինակություն ***՞՞Զապով՞՞ (Անդրանիկ Սողոյան)*** ՝ ավելին Մ.Բոյաջանը ներկա է եղել այն իրողությանը երբ Մելադայից վերցրած գումարի տոկոսները ուշացնող քաղաքացիները ենթարկվել են բռնության: Իր խոսքերով Մարիամը ներկա է եղել մի միջադեպի երբ Մելադան հայտարարել է որ ոմն երիտասարդի տեղափոխում են ***՞՞Զապի պադվալ՞՞*** տոկոսները ուշացնելու համար: Սակայն միայն քրեական հեղինակություններով չի որ հովանավորվում են

վաշխառուները, ավելի ցավալի է որ վերջիններիս հովանավորման նպատակով իրավապահ մարմիններում ինչպես նաև դատավորների շրջանակներում կատարվում են ծանր պաշտոնական հանցագործություններ: Քիչ չեն դեպքերը երբ գումարների ետ վերադարձման նպատակով տեղի են ունենում ***՝՝ռազբորկաներ՝՝:*** Այս ամենի պատճառը մեկն է՝ օրենքի ներկայացուցիչների անտարբեր և անհաղորդ՝ավելին հանցավոր , շահագրգիռ վերաբերմունքը տվյալ եկամտաբեր հանցագործություններին և օրենքի գերակայության իսպառ բացակայությունը ՀՀ-ում: Փաստացի բացի իրավապահ համակարգից նույն իրավապահ համակարգի թողտվությամբ վաշխառուները հովանավորվում են քրեական աշխարհի կողմից:

Իրավապահ, ինչպես նաև դատական համակարգի և քրեական աշխարհի սերտաճումը ստեղծում է պարարտ հող վաշխառուների անխափան ,անպատիժ գործունեության համար:Հաճախ քաղաքացիները վախից դրդված լռում են հասկանալով, որ խնդրի բարձրաձայնելը կարող է վտանգել իրենց և իրենց ընտանիքների անվտանգությունը մի կողմից՝ հանցավոր աշխարհի շնորհիվ , մյուս կողմից այդ նույն հանցավոր աշխարհը սպասարկող դատաիրավական համակարգի պատճառով: Քիչ չեն դեպքերը երբ մեր կազմակերպությունում անուններ բարձրաձայնելուց հետո ևս հնչել են կոնկրետ սպառնալիքներ,նույնիսկ զենքի միջոցով ,կամ զենքի կիրառմամբ ստիպել են քաղաքացուն հրաժարվել մեր հետագա իրավական աջակցությունից: Շահառուների անվտանգությունից ելնելով, նախկին և ներկա պաշտոնյաների անունները չեն հրապարակվում:

Վաշխառությանը վերաբերող ՀՀ դատաիրավական պրակտիկան

ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածը սահմանում է.

ՀՀ քր. օր-ի 213 հոդվածը՝ այն է՝

Հոդված 213. Վաշխառությունը

1. Վաշխառությունը՝ պարտք տրված դրամի կամ տեսակային հատկանիշով որոշվող գույքի համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող

չափով տոկոսներ ստանալը, ինչպես նաև անձի հետ նրա համար ծայրահեղ ոչ ձեռնտու պայմաններում այլ գործարք կատարելը, որից օգտվել է մյուս կողմը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Նույն արարքը՝

1) որի հետեւանքով տուժողն ընկել է նյութական ծանր կացության մեջ,

2) որը կատարվել է որպես արհեստ,

3) որը կատարվել է տուժողի անչափահաս լինելը կամ մտավոր զարգացման թերություններն օգտագործելով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից վեցհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:

Վերջին տարիների ընթացքում վաշխառության վերաբերյալ ՀՀ դատաիրավական պրակտիկայում տեղի են ունեցել մի շարք էական փոփոխություններ:

Վաշխառության հանցակազմի հետ կապված ըստ էության նոր դիրքորոշում և որոշակի հարցեր 2011 թվականին բարձրացվել են այն ժամանակ ՀՀ Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր, այժմ՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի նախագահ Վ. Ռշտունու կողմից: Իր վարույթում քննվող քրեական գործով դատավոր Վ. Ռշտունին որոշում է կայացրել քրեական գործի վարույթը կասեցնելու և ՀՀ սահմանադրական դատարան դիմելու մասին՝ վիճարկելով ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի սահմանադրականությունը:

Դատավորի կողմից բարձրացվել էին մի քանի հարցեր, որոնցից ամենաէականն այն էր, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ և 313-րդ հոդվածներով արդեն իսկ նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածով նախատեսված և քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա կատարվող վաշխառության երկընտրելի արարքների համար քաղաքացիաիրավական պատասխանատվություն:

«Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» թիվ ՍԴՈ-947[8] գործի քննության արդյունքում կայացված որոշմամբ ՀՀ Սահմանադրական դատարանը կատարել է հետևություն այն մասին, որ ***կոնկրետ արարքի համար միաժամանակ քրեական և քաղաքացիական պատասխանատվություն սահմանող նորմերն ունեն տարբեր առարկաներ, և դրանց միջոցով օրենսդիրը լուծում է տարբեր խնդիրներ. քաղաքացիական պատասխանատվության սահմանումը չի բացառում քրեորեն պատժելի արարքի համար պատասխանատվության սահմանումը: Բոլոր դեպքերում, օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարք կնքած անձը կարող է և պարտավոր է իմանալ, որ տվյալ արարքի համար սահմանված է ոչ միայն քաղաքացիական, այլ նաև քրեական պատասխանատվություն:***

Այսպիսով, ՀՀ Սահմանադրական դատարանի դիրքորոշմամբ որոշակի հստակություն է մտցվում վաշխառության դեպքերի հետ կապված քաղաքացիական և քրեական ճյուղերի կարգավորումների միջև և ընդգծվում է և քաղաքացիական, և քրեական պատասխանատվության միջոցների կարևորությունը:

Սակայն, գրեթե նույն ժամանակահատվածում, 2011 թվականի փետրվարի 24-ին թիվ ԵԿԴ/0176/01/09 քրեական գործով և 2012 թվականի հունիսի 08-ին թիվ ԵԿԴ/0102/01/11 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանը կայացնում է որոշումներ, որոնց մեջ արտահայված դիրքորոշումներով պայմանավորված ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների քննության պրակտիկան ենթարկվում է էական փոփոխությունների: Այդպես.

Լիա Ավետիսյանի վերաբերյալ թիվ ԵԿԴ/0176/01/09 քրեական գործով [9] կայացված որոշման մեջ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի միատեսակ կիրառության ապահովման խնդրին, սակայն այդ գործով կայացված որոշման հիմնավորումները, պետության կողմից

[8] http://www.concourt.am/armenian/decisions/common/2011/pdf/sdv-947.pdf

[9] http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=68940

քաղաքացիների կնքված գործարքներին միջամտելու մասով, լայնորեն կիրառվում են նաև վաշխառության հետ կապված գործերի քննության ժամանակ:

Նշված որոշմամբ Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական եզրահանգումն այն է, որ պետությունը պարտավոր չէ գործող քաղաքացիական օրենսդրության պահանջների անտեսմամբ գործարքներ կնքած քաղաքացիների գույքային և այլ իրավունքների վերականգնումը դիտել հանրային շահի տիրույթում և հանրային միջոցներ ծախսելով՝ իրականացնել նշված մասնավոր շահերի քրեաիրավական պաշտպանություն: Այդ մասնավոր շահերի պաշտպանությունը, որպես ընդհանուր կանոն, պետք է կատարվի մասնավոր իրավունքի տիրույթում՝ քաղաքացիաիրավական և քաղաքացիադատավարական միջոցներով:

Քնարիկ Պետրոսյանի վերաբերյալ թիվ ԵԿԴ/0102/01/11 քրեական գործով [10]

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը կրկին հիմնված է այն տրամաբանության վրա, որ պետությունը պարտավոր չէ գործող քաղաքացիական օրենսդրության պահանջների անտեսմամբ գործարքներ կնքած քաղաքացիների գույքային և այլ իրավունքների վերականգնումը դիտել հանրային շահի տիրույթում և այդ շահերի պաշտպանության համար ծախսել հանրային միջոցներ, հանրային-իրավական գործիքակազմի ներգրավումը պետք է տեղի ունենա միայն այն դեպքում, երբ հիմնավորվում է, որ տվյալ կոնկրետ դեպքում առկա է շոշափելիորեն ավելի մեծ հանրային շահ:

Վճռաբեկ դատարանի վերոշարադրյալ դիրքորոշումը հիմնված է նաև այն հանգամանքի վրա, որ որպես տոկոսի չափի խախտմամբ փոխառության պայմանագրի կնքման նախաձեռնող շատ դեպքերում հանդես է գալիս վաշխառության ենթադրյալ տուժողը, ով հետագայում, փաստորեն, հնարավորություն է ստանում չարաշահելու իր իրավունքը, եթե հայտնվում է անբարենպաստ դրության մեջ, օրինակ՝ չի կարողանում կամ չի ցանկանում կատարել ստանձնած պարտավորությունները:

[10] http://www.advocates.am/resources/advocates//img/decision/c7a30184a9ec8729fa74f334ac4b0d2d.pdf

ՀՀ վճռաբեկ դատարանի վերը նշված որոշումներում արտահայտված դիրքորոշումների հիման վրա վաշխառության հատկանիշներով բազմաթիվ դեպքերով քրեական գործերի հարուցումը մերժվում է, իսկ հարուցված շատ քրեական գործեր կարճվում են, ինչը պատճառաբանվում է նրանով, որ տոկոսով գումար տվող և տոկոսով գումար վերցրած անձանց միջև ծագած իրավահարաբերությունը կրում է քաղաքացիաիրավական բնույթ, իրավահարաբերությունը հանրային շահի տիրույթում չի գտնվում և նման դեպքերում պետությունը պարտավոր չէ հանրային միջոցներ ծախսելով՝ իրականացնել նշված մասնավոր շահերի քրեաիրավական պաշտպանություն: Այդպիսի գործերից մասնավորապես կարելի է մատնանշել օրինակ թիվ 68113514 քրեական գործով (գյումրեցի Կիրակոսյանների ընտանիքի վերաբերյալ) կայացված որոշումը, թիվ 13127214 քրեական գործով (Զինա Մելիքյանի վերաբերյալ) կայացված որոշումը:

Ըստ էության ՀՀ վճռաբեկ դատարանի վերոնշյալ որոշումներով կրկին անորոշություն մտցվեց վաշխառության դեպքերի հետ կապված քաղաքացիական և քրեական ճյուղերի կարգավորումների միջև, ինչի պատճառով թիվ ՍԴՈ-947 որոշման մեջ ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից շեշտադրված և քաղաքացիական, և քրեական պատասխանատվության միջոցների կարևորությունն իրավակիրառ պրակտիկայում այդպես էլ իր կիրառելիությունը չստացավ:

2011-2016 թվականների ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի հատկանիշներով գրանցված հանցագործությունների վերաբերյալ ՀՀ ոստիկանության կողմից տրամադրված վիճակագրական տեղեկատվության վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ վաշխառության վերաբերյալ դեպքերի հետ կապված բոլոր ցուցանիշները տարիների ընթացքում էականորեն նվազել են: Ընդ որում, դեպքերի զգալի մասերը կարճվել են ոչ արդարացնող հիմքերով: Դրանք հենց այն գործերն են, որոնց կարճման հիմքում վկայակոչվում են վերևում արդեն հիշատակված ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կայացված որոշումների հիմնավորումները և այդպիսով այդ գործերի վերաբերյալ քննություններ չեն իրականացվում:

Քրեական գործերով զբաղվող և ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հետ հաճախակի առնչություն ունեցող

փաստաբանների համոզմամբ նշված հանցագործության քննության նկատմամբ պետության կողմից նմանօրինակ քաղաքականություն վարելը հավանաբար կհանգեցնի արարքի ապաքրեականացմանը: Նշվածի համար որոշակի նշանակություն և հիմնավորում կարող է ունենալ նաև այն հանգամանքը, որ վաշխառության դեպքերն առանձնանում են լատենտայնության բարձր աստիճանով և իրենց բնույթով դժվար բացահայտվող հանցագործություններ են, ինչն իր հերթին դժվարեցնում է վաշխառությունների հետ կապված գործերի քննությունը և բացահայտումը:

2011թ. – արձանագրվել է 186 հանցագործության դեպք, 136 դեպքով հարուցվել է քրեական գործ, որից 99-ը կարճվել է, իսկ 50 դեպքով կայացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում:

2012թ. – արձանագրվել է 158 հանցագործության դեպք, 120 դեպքով հարուցվել է քրեական գործ, որից 107-ը կարճվել է, իսկ 38 դեպքով կայացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում:

2013թ. – արձանագրվել է 74 հանցագործության դեպք, 54 դեպքով հարուցվել է քրեական գործ, որից 40-ը կարճվել է, իսկ 20 դեպքով կայացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում:

2014թ. – արձանագրվել է 68 հանցագործության դեպք, 58 դեպքով հարուցվել է քրեական գործ, որից 47-ը կարճվել է, իսկ 10 դեպքով կայացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում:

2015թ. – արձանագրվել է 55 հանցագործության դեպք, 48 դեպքով հարուցվել է քրեական գործ, որից 51-ը կարճվել է, իսկ 7 դեպքով կայացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում:

2016թ. 10 ամիսներ – արձանագրվել է 28 հանցագործության դեպք, 24 դեպքով հարուցվել է քրեական գործ, որից 34-ը կարճվել է, իսկ 4 դեպքով կայացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում:

Եզրակացություն

Ամեն դեպքում, «վաշխառություն» չարիքի ապաքրեականացումը որևէ հիմնավորմամբ չի կարող արդարացվել, քանի որ ի վերջո այդ երևույթը հանգեցնում է մի շարք կարևոր և էական իրավունքների խախտման, կոնկրետ՝ Հայաստանի իրականությունում կործանում է մարդկային ճակատագրեր, կյանքեր, քայքայում է ընտանիքներ, նպաստում է արտագաղթին և այլն: Հետևաբար, այն իրավունքները, որոնց պաշտպանությանն ուղղված է ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածը, իրականում այսօր էլ ունեն պաշտպանության կարիք, հետևաբար վաշխառության ապաքրեականացմանն ուղղված քաղաքականության դեմ անհրաժեշտ է լուրջ և հետևողական պայքար:

Վաշխառության ապաքրեականացումը հստակորեն բխում է հասարակությունում բարձր դիրքեր գրաված վաշխառուների և բարձրաստիճան պետական այրերի, ինչպես նաև քրեական աշխարհի ներկայացուցիչների շահերից: Վաշխառության հոդվածի ապաքրեականացումը կհանգեցնի ամենաթողության, անպատժելիության և քաղաքացիների ֆինանսական էլ ավելի ստրկացման և հարստահարման: Ապաքրեականացնելու ջանքերը միտված են տոկոսով տրամադրվող գումարի տոկոսների վերին սահմանը բացառելուն, որը կարող է հանգեցնել անկառավարելի հետևանքների՝ այսինքն վաշխառուները կարող են տոկոսով գումար տրամադրել ցանկացած տոկոսադրույքով ընդհուպ մինչև տարեկան 800 տոկոս (նման նախադեպեր կան ՌԴ-ում): Միևնույն ժամանակ վաշխառության հոդվածի ապաքրեականացումը կհանգեցնի պետության դերի նսեմացման և քաղաքացու էլ ավելի անպաշտպանվածության: Միանշանակ պետք է պայքարել ոչ թե վաշխառության հոդվածի ապաքրեականացման, այլ տվյալ հոդվածի կիրառման ուղղությամբ:

Օրենքը չի գործում: Եվ սա այն պայմաններում, երբ տասնյակ հազարավոր ընտանիքներ գտնվում են վաշխառուների լծի տակ:

Ինչպես երևում է ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածով նախատեսված հանցագործության դեպքերի վերաբերյալ ՀՀ ոստիկանությունում արձանագրված դեպքերի վիճակագրությունից[11]՝ տարեցտարի ոստիկանությունում ստացվող տեղեկությունների թիվը կտրուկ նվազում է, ինչը պայմանավորված է նրանով, որ նախորդ տարիներին ներկայացված բողոքների հիման վրա պատշաճ քննություններ չեն իրականացվել: Այդ մասին է վկայում այն հանգամանքը, որ դատարաններ ուղարկված գործերի թիվը կազմում է ոստիկանությունում ստացված բողոքների չնչին տոկոսը: Զուգահեռաբար ավելանում է «Վելես» իրավապաշտպան հասարակական կազմակերպությանը դիմող քաղաքացիների թիվը, ովքեր չստանալով պատշաճ պաշտպանություն պետական մարմինների կողմից, աջակցություն են ակնկալում քաղաքացիական հասարակությունից: Իրավապահ մարմինների վերը նշված աշխատառճով պայմանավորված էլ տարիների ընթացքում քաղաքացիների վստահությունը ոստիկանության նկատմամբ նվազել է և քաղաքացիները, տեղեկանալով ոստիկանության ոչ հետևողական վերաբերմունքի մասին, սկսել են վաշխառության դեպքերի մասին բարձրաձայնել ավելի քիչ դեպքերում:

Հասարակության իրազեկման նպատակով մենք պատրաստել ենք սոցիալական անիմացիոն տեսահոլովակ՝ «Վաշխառությունը որպես փողերի լվացման միջոց» խորագրով:[12]

[11] Տես Հավելված 1 և Հավելված 2:
[12] https://www.youtube.com/watch?v=0eEoa9Jb9p4

Հավելված 1

2011-2016թթ. ընթացքում ՀՀ քր. օր-ի 213 հոդվածի հատկանիշներով գրանցված հանցագործությունների

		Վերցրվել է հաշվառման ընթ. տարում	Մնացել է հաշվառման մեջ ընթ. տարում	Ընդհ դեպքերով մերժվել է	Ընդամենը վարույթում	այդ թվում հարուցված քրեական գործերը										Կասեցվել են	Ընդհ ՔՕՕ 31մաս1	Փոխանցվել են հաջորդ հաշվ.ժամ.	Ուղարկվել են գլխ. կամ հանձն. պլ.
						Ուղարկվել է դատարան	Կարճվել են ոչ արդարաց.	Կարճվել են ՔՕՕ 35մաս6-ով	Կարճվել են ՔՕՕ 35մաս10 -ով	Կարճվել են ՔՕՕ 35մաս12-ով	Կարճվել են ՔՕՕ 35մաս13-ով	Կարճվել են արդարց. հիմքերով							
												ընդամենը	Ընդհ ՔՕՕ 35մաս1-ով	Ընդհ ՔՕՕ 35մաս2-ով	Ընդհ ՔՕՕ 35մաս3-ով				
2011	Ընդ. ՀԱՑԱՍՏԱՆՈՒՄ	197	186	50	219	29	86	10	0	0	23	13	1	11	0	4	0	34	3
	Ընդ. ԵՐԵՎԱՆՈՒՄ	146	137	25	166	20	72	9	0	0	18	11	0	10	0	3	0	32	3
	ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄՎ	2	2	1	2	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	1	0
	ԱՐԱՐԱՏԻ ՄՎ	25	24	13	25	0	10	1	0	0	4	1	1	0	0	0	0	1	0
	ԱՐՄԱՎԻՐԻ ՄՎ	4	3	2	4	1	0	0	0	0	0	1	0	1	0	0	0	0	0
	ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄՎ	3	3	2	3	0	0	0	0	0	0	0	0	0	0	1	0	0	0
	ԼՈՌՎԱ ՄՎ	8	8	2	9	5	2	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
	ԿՈՏԱՅՔԻ ՄՎ	2	2	0	3	1	2	0	0	0	1	0	0	0	0	0	0	0	0
	ՇԻՐԱԿԻ ՄՎ	2	2	2	2	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
	ՍՅՈՒՆԻՔԻ ՄՎ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
	ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄՎ	5	5	3	5	2	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
	ՏԱՎՈՒՇԻ ՄՎ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
2012	Ընդ. ՀԱՑԱՍՏԱՆՈՒՄ	185	158	38	220	48	69	7	1	0	36	38	3	34	0	5	0	21	1
	Ընդ. ԵՐԵՎԱՆՈՒՄ	146	122	22	179	45	60	3	1	0	36	34	2	32	0	5	0	12	1
	ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄՎ	0	0	0	1	0	1	1	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
	ԱՐԱՐԱՏԻ ՄՎ	13	11	5	14	1	4	3	0	0	0	3	1	1	0	0	0	1	0
	ԱՐՄԱՎԻՐԻ ՄՎ	6	6	4	6	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	2	0
	ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄՎ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
	ԼՈՌՎԱ ՄՎ	7	7	0	7	1	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	6	0
	ԿՈՏԱՅՔԻ ՄՎ	5	4	3	5	0	1	0	0	0	0	1	0	1	0	0	0	0	0
	ՇԻՐԱԿԻ ՄՎ	3	3	3	3	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
	ՍՅՈՒՆԻՔԻ ՄՎ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
	ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄՎ	3	3	0	3	1	2	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
	ՏԱՎՈՒՇԻ ՄՎ	2	2	1	2	0	1	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
2013	Ընդ. ՀԱՑԱՍՏԱՆՈՒՄ	84	74	20	105	12	22	5	3	1	1	18	1	17	0	2	0	31	0
	Ընդ. ԵՐԵՎԱՆՈՒՄ	55	47	11	67	7	11	2	2	0	1	11	1	10	0	2	0	25	0
	ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄՎ	3	3	0	3	2	1	1	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
	ԱՐԱՐԱՏԻ ՄՎ	2	2	1	3	0	1	0	1	0	0	1	0	1	0	0	0	0	0
	ԱՐՄԱՎԻՐԻ ՄՎ	3	3	1	5	1	1	0	0	0	0	0	0	0	0	0	0	2	0
	ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄՎ	1	1	0	1	0	1	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
	ԼՈՌՎԱ ՄՎ	8	7	2	14	2	3	0	0	1	0	5	0	5	0	0	0	2	0
	ԿՈՏԱՅՔԻ ՄՎ	7	6	4	7	0	0	0	0	0	0	1	0	1	0	0	0	2	0
	ՇԻՐԱԿԻ ՄՎ	1	1	1	1	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
	ՍՅՈՒՆԻՔԻ ՄՎ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
	ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄՎ	4	4	0	4	0	4	2	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
	ՏԱՎՈՒՇԻ ՄՎ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
2014	Ընդ. ՀԱՑԱՍՏԱՆՈՒՄ	83	68	10	115	10	43	9	0	0	5	28	1	27	0	6	1	15	3
	Ընդ. ԵՐԵՎԱՆՈՒՄ	50	43	1	76	7	35	8	0	0	5	18	0	18	0	6	1	7	2
	ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄՎ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
	ԱՐԱՐԱՏԻ ՄՎ	8	7	5	8	0	0	0	0	0	0	1	1	0	0	0	0	2	0
	ԱՐՄԱՎԻՐԻ ՄՎ	10	9	1	12	1	6	0	0	0	0	2	0	2	0	0	0	2	0
	ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄՎ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
	ԼՈՌՎԱ ՄՎ	4	1	0	6	1	1	1	0	0	0	4	0	4	0	0	0	0	0
	ԿՈՏԱՅՔԻ ՄՎ	3	2	2	5	1	0	0	0	0	0	1	0	1	0	0	0	0	1
	ՇԻՐԱԿԻ ՄՎ	7	5	0	7	0	1	0	0	0	0	2	0	2	0	0	0	4	0
	ՍՅՈՒՆԻՔԻ ՄՎ	1	1	1	1	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
	ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄՎ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
	ՏԱՎՈՒՇԻ ՄՎ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
2015	Ընդ. ՀԱՑԱՍՏԱՆՈՒՄ	79	55	7	96	14	16	6	0	0	0	35	2	33	0	0	0	24	0
	Ընդ. ԵՐԵՎԱՆՈՒՄ	45	31	1	54	13	9	5	0	0	0	18	0	18	0	0	0	13	0
	ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄՎ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
	ԱՐԱՐԱՏԻ ՄՎ	6	5	1	8	0	2	0	0	0	0	3	1	2	0	0	0	2	0
	ԱՐՄԱՎԻՐԻ ՄՎ	5	4	0	7	0	0	0	0	0	0	3	0	3	0	0	0	4	0
	ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄՎ	2	2	1	2	1	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
	ԼՈՌՎԱ ՄՎ	7	6	3	7	0	0	0	0	0	0	1	0	1	0	0	0	3	0
	ԿՈՏԱՅՔԻ ՄՎ	3	2	0	3	0	2	1	0	0	0	1	0	1	0	0	0	0	0
	ՇԻՐԱԿԻ ՄՎ	8	2	0	12	0	1	0	0	0	0	9	1	8	0	0	0	2	0
	ՍՅՈՒՆԻՔԻ ՄՎ	2	2	0	2	0	2	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
	ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄՎ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
	ՏԱՎՈՒՇԻ ՄՎ	1	1	1	1	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
2016 10 ամիսներով	Ընդ. ՀԱՑԱՍՏԱՆՈՒՄ	40	28	4	64	3	10	3	2	0	1	24	1	23	0	1	0	21	1
	Ընդ. ԵՐԵՎԱՆՈՒՄ	24	16	1	37	0	6	2	0	0	1	12	0	12	0	1	0	16	1
	ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄՎ	1	0	0	1	0	0	0	0	0	0	1	0	1	0	0	0	0	0
	ԱՐԱՐԱՏԻ ՄՎ	6	5	0	8	1	2	0	1	0	0	2	0	2	0	0	0	3	0
	ԱՐՄԱՎԻՐԻ ՄՎ	1	1	0	5	2	0	0	0	0	0	3	0	3	0	0	0	0	0
	ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄՎ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
	ԼՈՌՎԱ ՄՎ	3	2	2	6	0	1	1	0	0	0	3	1	2	0	0	0	0	0
	ԿՈՏԱՅՔԻ ՄՎ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
	ՇԻՐԱԿԻ ՄՎ	3	2	1	5	0	0	0	0	0	0	3	0	3	0	0	0	1	0
	ՍՅՈՒՆԻՔԻ ՄՎ	1	1	0	1	0	1	0	1	0	0	0	0	0	0	0	0	0	0
	ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄՎ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
	ՏԱՎՈՒՇԻ ՄՎ	1	1	0	1	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	1	0

Հավելված 2

	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	Ընդհանուր
Հաղորդում հանցագործության մասին	186	158	74	68	55	28	569
Նյութերով մերժվել է	50	38	20	10	7	4	129
Հարուցված քրեական գործերը	136	120	54	58	48	24	440
Կարճված քրեական գործերը	99	107	40	47	51	34	378